ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1734-Ա « 06 » ապրիլի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ, ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, Հ.19 ՀԱՍՑԵՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ՝ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՏԻԳՐԱՆ ՍՏԵՓԱՆԻ ՇԱՆԼՅԱՆԻ, ԱՎԵՏԻՍ ՍՏԵՓԱՆԻ ՇԱՆԼՅԱՆԻ, ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍԻ ՇԱՆԼՅԱՆԻ, ԱՐՄԻՆԵ ՆՇԱՆԻ ՇԱՆԼՅԱՆԻ, ԱՐԱՔՍՅԱ ՆՇԱՆԻ ՇԱՆԼՅԱՆԻ ԵՎ ԱՐՄԻՆԵ ՆՇԱՆԻ ՇԱՆԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2010 թվականի նոյեմբերի 12-ի հ.5299-Ա որոշումը, կառույցը քաղաքացիական օրենսգրքի 188–րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանելու վերաբերյալ՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից 31.03.2026թ. տրված մասնագիտական եզրակացությունը, հաշվի առնելով ինքնակամ կառույցը հաշվառված լինելու վերաբերյալ ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 24/02/2026թ. տրված հ.ԱՏ-24022026-01-1091 տեղեկանքը, «ՈՒՐԲԱՆ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից 02.10.2025թ. տրված տեխնիկական դրական եզրակացությունը, ինքնակամ կառույցների արտաքին չափերի վերաբերյալ «Ռուստամ Մաթևոսյան» Ա/Ձ-ի կողմից 27.05.2026թ. տրված տեղեկանքը, ինչպես նաև հաշվի առնելով կառույցն իրականացրած անձանց դիմումները (24.11.2025թ. հ.Դ-130618-25, 24.12.2025թ. հ.Դ-143538-25, 04.02.2026թ. հ.Դ-4702-26, 24.02.2026թ. հ.Դ-17762-26, 18.03.2026թ. հ.Դ-26511-26, 30.03.2026թ. հ.Դ-30606-26).

1. Երևան, Շենգավիթ, Բագրատունյաց փողոց, 2-րդ նրբանցք, հ.19 հասցեում՝ ընդհանուր բաժնային սեփականություն (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.07072025-01-0018 վկայական) հանդիսացող հողամասում քաղաքացիներ Տիգրան Ստեփանի Շանլյանի, Ավետիս Ստեփանի Շանլյանի, Անահիտ Պետրոսի Շանլյանի, Արմինե Նշանի Շանլյանի, Արաքսյա Նշանի Շանլյանի և Արմինե Նշանի Շանլյանի կողմից

ինքնակամ իրականացված 389,65 քառ.մետր ընդհանուր մակերեսով կառույցը (բնակելի տուն) ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ.

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաշվարկված 1728878 (մեկ միլիոն յոթ հարյուր քսանութ հազար ութ հարյուր յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ